

ալ պարտադրեցին զոհերուն, անոնց պատկերելով ընդարձակութիւնը կատարուածին: Ու պէտք է քալել:

Հերձուածող Մաթիկը իր սերունդէն -յեղափոխական- կը զատուէր ուրեմն ուրիշ ալ մասնաւորութեամբ մը ու եթէ շատ չէք գտներ բառը՝ վրիպանքով մը: Անիկա ՏԱՌԱՊԱՆՔԻՆ դէմ ծանր իր խաչակրութիւնն էր: Այսքան յստակ չէին իր բառերը, այդ հոգեվիճակը ինծի թելադրելու համար: Բայց որոշապէս ես կը զգայի, թէ իր պահանջն էր ազատագրուիլ, բարձրանալ ազգային տառապանքին, գտնելու համար ամբողջական տառապանքը ու... զոհաբերուելու ճիշդ այդ ճամբուն վրայ: Կը մտածեմ, թէ ընկեր Մաթիկը կը հաւատար, որ թուրքին եաթաղանին տակ իր աչքերը գոցող հայ մտաւորականը կարելի էր երջանիկ նկատել, քան միւսը, որ հեռու Արեւելքի սառնակառոյց ամայքներուն մէջ, ամէն ըրպէ կը նահատակէր իր հոգին, ցարական ոստիկաններուն նախատինքին ներքեւ: Գրեթէ գուշակեցի այդ երանութեան զգացումը, երբ ներկայացուց անիկա հայ հարսնուկը մորթուած թուրքէն, անշուշտ աւելի բախտաւոր, քան միւսը, ան ալ տարեկից կին մը, Մոսկուայի «խաւար որջերում», հոգեկան ու մարմնական իր անպարագիծ գեղեցկութիւնը ըրեր էր ապրանք վաճառքի, ամէն օր, ուզւած գնով, ուզուած անգամով, բզկտելու համար անտես եաթաղաններուն ներքեւ գինովին ու ախտաւորին, ոճրագործին ու գազանին, մեռնիլ չկրնալու ալ դժբախտութեամբ մը: Մաթիկ միշտ կը հաւատար, թէ թուրքին ձեռքով մարագներու մէջ խարանուած ծերունին նուազ արժանի էր արցունքի, քան այն միւսը, որ միշտ նոյն «Մոսկուայում» (Ռուսաստանը այն քաղաքն էր անոր մէջ ու յիշեց ալ Տոսթոեւսկիին արհամարհանքը Պետրոսի քաղաքի մը վրայ), «մի սառած անկիւնում» սառիլն իսկ կ'անգիտանար, սպասումին մէջը փշուր մը աւելցուքին, որ դէմի շքեղ ուսքորանէն լման օր մը ճամբայ կը դնէր գալու համար իրեն, երբ, իր նուազ աչքերուն առջին, շուքերու պէս, հազարներ կը մտնէին, խմելէ, ուտելէ,